**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

N02/01.91/9074-18 "18" 12 2018 թ.

«ԶԱՆԳՎԱԾ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00891484) տնօրեն

ՊՐՆ Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Հասցե՝ ք. Երևան, Գյուլիքեխվյան 7/11
Էլ. հասցե՝ zangvac-ltd@mail.ru

ՀՀ մշակույթի նախարարության և «ԶԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 31-ին կնքված N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/34-3» ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) համաձայն Ձեր կողմից պետք է իրականացվեին պայմանագրի թիվ 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով սահմանված՝ ՀՀ Տավուշի մարզի Գոշ համայնքի Գոշավանքի գրատուն-զանգակատան օգտագործման և տարածքի մասնակի բարեկարգման նախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

ՀՀ մշակույթի նախարարության և «ԶԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N 1 համաձայնագրով պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել էր և սահմանվել 2018 թվականի նոյեմբերի 19-ը:

ՀՀ մշակույթի նախարարության 2018 թվականի դեկտեմբերի 10-ի N 02/14-1/8868-18 գրությամբ Ձեզ տեղեկացվել էր, որ այդ օրվա դրությամբ որևէ աշխատանք Ձեր կողմից չի ներկայացվել և հայտնվել էր, որ առաջիկա սեղմ ժամկետներում աշխատանքները չներկայացնելու դեպքում ՀՀ մշակույթի նախարարության կողմից միակողմանի կլուծվի պայմանագիրը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի պահաջները՝ ՀՀ մշակույթի նախարարությունը 2018 թվականի դեկտեմբերի 18-ին միակողմանի լուծում է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ԶԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am

նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 2500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը որպես տուգանք՝ պայմանագրի 5.2 կետի համաձայն (պայմանագրի 4.1 կետում նախատեսված պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսը):

Միաժամանակ հիմք ընդունելով Ձեր կողմից 25.05.2018 թ. ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի (պայմանագրի կատարման ապահովում) 1.3 կետը՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը):

18.12.2018

X

Հարգանքով՝ Подписано: MURADYAN SAMVEL 1104630109

Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝
Ս. Գևորգյան
Հեռ.՝ 011-58-58-51
Ն. Կարապետյան
Հեռ.՝ 011-58-51-78